Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ ԹԻՎ 88, 89, ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ ԹԻՎ 90-97 ԵՎ ՄԱՐՏԻ 3-Ի ԹԻՎ ԹԻՎ 98-105 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 98 որոշման 4-րդ կետը անհրաժեշտ է գրառել որոշման նախաբանում; Բացի այդ, հատակագիծը որոշմանը կից ներկայացված չէ:

Թիվ թիվ 100, 102, 103 որոշումների նախաբանում <<դրույթներ>> բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ <<ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33–րդ կետի և հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում>>:

Թիվ 104 որոշման դրույթները համարակալված չեն, բացի այդ որոշման երկրորդ պարբերությունը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին:

Թիվ 105 որոշման մեջ հղումը անձը հաստատող փաստաթղթին սխալ է գրառված:

Թիվ թիվ 88-105 որոշումների մեջ չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը:

Բացի այդ, չի պահպանվել Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետով սահմանված ժամկետը:

Կատարող Ս. Ավետիսյան
23.06.2020թ.